

«ՄԱՅՐԵՆԻ ՊԱՇՏՊԱՆ» ՇԱՐՔԻՑ

ԼԵԶՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔ Է

ԵՔԵ ՏԱՆՏԵՐ ԶԵՍ, ՈՐԵՄՆ ԿԵՆՎՈՐ ԵՍ ԿԱՍ ԸՅՈՐ

Մեքերի հանդիպեցի Ռոստոմի գեղեցիկ հրապարակներից մեկում՝ իր երեք երեխաների, գեղեցկուհի կնոջ և տարեց ծնողների հետ զրուսելիս: Հին ծանոթի նման մոտեցա և առանց կասկածելու, որ հայ են, բարևեցի մայրենի լեզվով: Ներկայանալուց ու ծանոթանալով հետո հարցրեցի, թե արդյո՞ք ծնողները չեն ցանկանա երեխաներին հայոց լեզվի խմբակ ուղարկել:


- Ինչո՞ւ ոչ, դա որտեղ է, - հարցրեցին: Ասացի, որ թիվ 83 դպրոցում:
- Պայմանավորվեցինք, ապա շարունակվեց մեր զրույցը:
- Իսկ ե՞րբ եք դուք եկել հայրենիքից:**
- 2014-ին ընտանիքով մինչ այդ ես էի մենակ գնում գալիս:
- Այստեղ հեշտ է ավելի՞, քան հայրենիքում**
- Տխուր նայեց աչքերիս:

- Հեշտ չէ, բայց հացի խնդիր էր: Թե ինչ փոթորիկներ են խռովել իմ հոգին՝ մինչ այդ որոշումն ընդունելը, միայն Աստված գիտի: Փախել ենք մեկ-երկու պորթլեմից, հանդիպել ենք բազմաթիվ խնդիրների. կեցություն, փաստաթուղթ, աշխատանք, լեզվական բարիք և ամենացավալին սառը, օտար, անծանոթ միջավայր...

- Մեքեր, ի՞նչ հույսեր եք կապում Հայաստանում վերջերս կատարված հեղափոխության հետ:

Միանգամից ուրախությամբ ողողվեց դեմքը:

- Դա ամենալուսավորն էր, ամենասպասվածն էր, որի մասին 6 ամիս առաջ անգամ երազել չէինք կարող: Դա ուղղակի աստվածային էր. երկինք պարզած մերը ձեռքերով, առանց արյուն ու զոհերի, ժողովուրդը Աստուծուց վերցրեց իր օրհնությունը տասնյակ տարիների



Մեքեր Օհանյան

անարդարությունների ու զրանքների փոխարեն:

- Ի՞նչ կասեք վերադարձի ճամպուկները կապելու մասին:

- Վերջին հանգրվանը շուտ թե ուշ, այնտեղ է... Առայժմ դեռ երեխաների կրթության հարցերով ենք զբաղված: Եվ շատ պիտի ջանամ, որ նրանք բարձրագույն կրթություն ստանան Հայաստանում, ամուսնանան հայերի հետ և իրենց ընտանիքներում շարունակեն խոսել հայերեն, պատվեն ծնողներին և պահեն այն ազգային ավանդույթները, որոնք այսօր մենք ենք պահում մեր ընտանիքում:

- Եվ այնուամենայնիվ, Մարտակերտի շրջանի գյուղ Հաթերքից եթե դուրս եք եկել և այս պահին զրուսում եք Դոնի գեղատեսիլ ափին, ուրեմն այստեղ ավելի լավ է... Ի՞նչ կասեք...

- Լավը՝ լավ է, միայն դու այստեղ տանտեր չես... Եթե տանտեր չես, ուրեմն կամ կենվոր ես, կամ՝ հյուր, ով շուտ թե ուշ պիտի վերադառնա իր Տունը:

ԻՄ ՔԱՂՅՐ ԼԵԶՈՒ

Բավական չէ ազգասեր ու հայրենասեր լինելը, պետք է մի քիչ էլ լեզվասեր լինել, պետք է սիրել, պաշտել, զգվել հարազատ մոր հարազատ լեզվին. այս սերը միայն կրանա մեր առջև մեր լեզվի անհատնում ճոխությունը, նրա նրբությունը և քաղցրությունը:

Մ. Նալբանդյան

- Ես շատ հպարտ եմ, որ հայ եմ, և իմ մայր լեզուն հայերենն է: Հաճախում եմ թիվ 61 դպրոցում գործող հայոց լեզվի «Արևիկ» խմբակ: Պատիվ է ինձ համար լինել հայ, դաստիարակվել հայեցի ոգով, ճանաչել հանձարներին, ովքեր իրենց գործունեությամբ միշտ բարձր են պահել մեր մայր լեզուն, սովել հերոսներ, ովքեր կյանքի գնով են պաշտպանում հայրենի հողը:

Լեզուն ճկուն է ու ճոխ այն դեպքում, երբ նրա միջոցով



Քրիստինա Տոնյան

կարողանում ենք ազատորեն արտահայտել ցանկացած գաղափար, մարդկային զգացմունքներ: Հենց հայոց լեզուն ունի գաղափարներն ու զգացմունքները ճշտությամբ ու խորությամբ արտահայտելու համապատասխան ու նուրբ ձևեր:

Սա մեր լեզվի հարստությունն է: Ցանկացած հայ պետք է բարձր պահի իր մայրենի լեզուն, դրա համար հարկավոր է, որ մարդ կատարելագործի իր գիտելիքները: Դրա համար պետք է ոչ միայն գրելու ժամանակ լավ բաղնարություն կատարել, այլև այդ լեզվով շատ կարդալ:

Հայոց լեզուն աշխարհի հնագույն լեզուներից է: Այն հայ

ժողովրդի մեծագույն հարստությունն է: Ճիշտ է մարդ պետք է օտար լեզուներին էլ տիրապետի, սակայն միշտ պետք է հիշի, որ հարազատը իր մայրենին է: Պետք է մտածել, խոսել, կարդալ և երգել մաքուր հայերենով:

Հայերը աշխարհով մեկ սփռված լինելով, մինևույն է, միշտ անաղարտ են պահում իրենց լեզուն: Այդպիսին եմ նաև ես, ով չի ապրում իր հայրենիքում, ով կարոտ է իր մայր հողին:

Շատ դժվար է ապրել արտերկրում՝ հայրենիքից հեռու, և մաքուր պահել մայրենի լեզուն:

Ցանկացած սփյուռքահայ երիտասարդ, ինչքան էլ փորձի անաղարտ պահել հայոց լեզուն

իր ճկունությամբ ու ճոխությամբ, մինևույն է չի կարողանա, եթե հայ գրողների ըստեղծագործությունները կարդալու սեր չունեն:

Ես ցավ եմ զգում, որ ապրելով հայրենիքից հեռու, հնարավորություն չունեմ ուսումնասիրելու հայոց պատմությունը: Բոլորիս ցանկությունն է կապ հաստատել մայր հայրենիքի հետ, որն էլ կնպաստի մայրենի լեզվի պահպանմանը:

Սակայն ինչքան էլ դժվար լինի պահպանել հայոց լեզուն, մինևույն է մեր ազգային գոյության և էության ամենախոշոր փաստը, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը մեր մայրենին է:



ՀԱՅԵՐԵՆ ՍՈՎՈՐԵԼԸ ՄԵԳ ՀԱՍԱՐ ՊԱՏԻՎ Է

Մարգիս և Սոնա Մայրեյանները հաճախում են Դոնի Ռոստոմի թիվ 61 դպրոցում գործող հայերենի «Արևիկ» խմբակ: Նրանք, ինչպես խմբակի շատ երեխաներ արդեն սովորել են հայերեն այբուբենը, գրել և կարդալ: Երեխաների մայրը՝ Քրիստինան, պատմում է, որ այստեղ է տեղափոխվել 2000 թվականին, ամուսնացել, Մարգիսն ու Սոնան այստեղ են ծնվել: Ընտանիքում խոսում են միայն հայերեն:

- Մայրենին սովորելը մեզ համար անհրաժեշտություն է: Ավելին, միայն ցանկություն չէ կամ քմահաճույք սովորել ևս մեկ լեզու, ոչ, դա մեր ներքին դրդումն է, մեր ներաշխարհի ձայնը, մեր արյան կանչն է: Նրանք էլ մի օր ծնող են դառնալու, երեխաներ ունենալու և, պատկերացրեք, չկարողանան իրենց երեխաներին հայերեն սովորեցնել: Իսկ լեզվից հեռանալը ինքնությունից հեռանալու առաջին ազդակն է: Այստեղ մեծ դեր է խաղում հնա-



րավորության առկայությունը, ինչը մեզ պարզում է «Արևիկ»-ը: «Արևիկ»-ում իմ երեխաները ոչ միայն սովորում ու զգում են հայերեն, այլ հայրենասիրության, հայեցիության դասեր առնում:



Վարսենիկ Բարսեյան Մանթրոսյանի «ՇԱՀՈՒՄՅԱՆ, ՄԻՍՅՈՂ ՕՐԲԱՆ» գիրքը հեղինակի մտորումներն են ճնշողավայրի մասին: Այն իրապատում-հուշապատում է, զգացմունքների յուրատեսակ պոթթևում և անցյալը վերակենդանացնելու փորձ: Հեղինակը հետաքրքիր մանրամասներ է ներկայացնում հայաբնակ Շահումյանի շրջանի պատմական Գյուլիստանի աշխարհաքաղաքական դիրքի, խորհրդային տարիների սոցիալական, մշակութային կյանքի վերաբերյալ պատմվածքը եզրափակելով Արցախյան պատերազմի տարիներին Շահումյանի հայաբնակ տարածքների բռնագաղթի վերաբերյալ ակնհաստեսների և գործողությունների անմիջական մասնակիցների հետ ուշագրավ հարցազրույցներով:



Для заказа книги «ՇԱՀՈՒՄՅԱՆ, ՄԻՍՅՈՂ ՕՐԲԱՆ» автора Варсеник Бабаян-Сантросян звоните по телефону +7 (925) 534-86-46 или пишите электронную почту kniga-vbs@yandex.ru